ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Վարդանաշեն, 077.07.00.10, vardanashen.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՄԱՐՏԻ 2017թվականի N 13-Ա

ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնքի
բնակիչ՝ Ահմադ Բասոյի Գուսեյանը (ծնվ.06.06.1953թ) և Գյավազ Կակեյի Գուսեյանը (ծնվ. 14.10.1953թ) դիմել են Վարդանաշեն համայնքի 8-րդ փողոցի 26-րդ տուն հասցեում գտնվող 0,2932հա հողամասի վրա մինչև 2001 թվականը կառուցված բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 15.05.2001թ., հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի նախատեսված սահմանափակումների ցանկում, կառուցված չէ քաղաքաշինության նորմերի էական խախտումներով, չի խախտում այլ անձանց շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով, ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով ,"Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին" ՀՀ օրենքով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնքի 8-րդ փողոց 26-րդ տուն հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ քաղաքացիներ Ահմադ Բասոյի Գուսեյանի (ծնվ. 1953թ.) և Գյավազ Կակեյի Գուսեյանի (ծնվ. 1953թ) գույքային իրավունքները, ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.2932հա օրինական հողամասի վրա 1980թվականին կառուցված 165.80քմ բնակելի տան, թիվ 1 տարածք, անասնաշենք 28.80քմ կառուցված 1985թ թիվ 2-րդ, թոնրատուն 14.30քմ կառուցված 1985թ թիվ 3-րդ տարածք:

2. Տնամերձ հողասին կից ավել օգտագործվող 0.0132քմ հողատարածքը անհատույց սեփականության իրավունքով հատկացնել Ահմադ և Գյավազ Գուսեյաններին:
3. Անշարժ գույքը բավարարում է ՀՀ Հողային օրենսգրքի 117-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված պայմաններին:
4. Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Ահմադ և Գյավազ Գուսեյանների սեփականության իրավունքները,սույն որոշման 2-րդ կետով նշված, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

20 17 թ. մարտի 15
գ.Վարդանաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Վարդանաշեն, 077.07.00.10, vardanashen.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՄԱՐՏԻ 2017թվականի N 14-Ա

ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնքի բնակիչ Ահմադ, Գյավազ, Հայկազ, Թուկազ, Կնյազ և Հերիքնազ Գուսեյաններին սեփականության իրավունքով առաջին պետական գրանցման ժամանակ հատկացված է եղել 0,28հա տնամերձ հողամաս: Սակայն 2003թվականին կատարված չափագրման ժամանակ սեփականատիրոջ կողմից փաստացի օգտագործվող հողամասի չափը կազմել է 0,2932հա : Չափագրումների տարբերությունը կազմել է 0,0132հա, հաշվի առնելով, որ ավել օգտագործվող հողամասը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների տակ և բավարարում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերի պահանջներին, և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տնամերձ հողամասին կից ավել օգտագործվող 0,0132հա հողամասը անհատույց սեփականության իրավունքով հատկացնել Ահմադ, Գյավազ, Հայկազ, Թուկազ, Կնյազ և Հերիքնազ Գուսեյաններին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2017 թ. մարտ 15
գ.Վարդանաշեն